«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 29.10.2015թ-ի թիվ 23 արձանագրությամբ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՍՊԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի, RL 1-001 կանոնների 8.3.5-րդ կետի և RL 1-017 կանոնների 9-րդ կետի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով, ինչպես նաև Ընկերությանը հանձնարարվել է 10 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թույլ տրված խախտումը կամ օրենքով սահմանված կարգով վիճարկել դատական ակտը, նույն ժամկետում այդ մասին տեղեկացնել Բյուրոյին՝ ներկայացնելով կատարված գործողությունները հավաստող փաստաթղթերի պատճենները և եթե դատական ակտի վիճարկման դեպքում նշված դատական ակտով հաստատված փաստական հանգամանքները էականորեն փոփոխության չենթարկվեն, ապա Ընկերությանը հանձնարարվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թուլ տրված խախտումը, նույն ժամկետում Բյուրոյին ներկայացնել խախտման վերացումը հավաստող փաստաթղթերի պատճենները: